Գյուղատնտեսական նշանակության հողերը որպես չօգտագործվող հողեր դասակարգելու չափանիշները եվ դրանց հաշվառման կարգը սահմանելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____2022 թվականի N _____ Ն

Գյուղատնտեսական նշանակության հողերը որպես չօգտագործվող հողեր դասակարգելու չափանիշները եվ դրանց հաշվառման կարգը սահմանելու մասին

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել՝

- գյուղատնտեսական նշանակության հողերը որպես չօգտագործվող հողեր դասակարգելու չափանիշները՝ համաձայն N 1 հավելվածի,
- չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվառման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածով սահմանվում են գյուղատնտեսական նշանակության հողերից միայն վարելահողերը և բազմամյա տնկարկները որպես չօգտագործվող հողեր դասակարգելու չափանիշները:
3. ՀՀ էկոնոմիկայի նախարարին՝ հաշվի առնելով սույն որոշման կիրարկման արդյունքները, մինչև 2024 թվականի 4-րդ եռամսյակի ավարտը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել սույն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ նախատեսող ՀՀ

կառավարության որոշման նախագիծ, որով կսահմանվեն գյուղատնտեսական նշանակության հողերից խոտհարքները և արոտավայրերը որպես չօգտագործվող հողեր դասակարգելու չափանիշները։

4. ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված կարգի պահանջներն ապահովելու նպատակով՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 20-օրյա ժամկետում Կադաստրի կոմիտեի կողմից վարվող ազգային գեոպորտալի քարտեզագրական էլեկտրոնային համակարգում ապահովել ՀՀ էկոնոմիկայի նախարարության հասանելիությունը։
5. Սահմանել, որ սույն որոշման հիման վրա գյուղատնտեսական նշանակության հողերը որպես չօգտագործվող հողեր դասակարգելու և հաշվառելու գործընթացը սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի հունվարի 1-ն իրականացվում է փորձնական սկզբունքով, և սույն կետում նշված ժամանակահատվածը հաշվանցվում է հողային օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված ժամկետից։
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ